ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Երաժշտառիթմական վարժությունները որպես երեխայի ռիթմի զգացողության միջոց

Հակոբյան Սուսաննա Պետրոսի

Արարատի մարզ <<Արտաշատ համայնքի Բարձրաշեն գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Գլուխ 1՝ Երաժշտառիթմական վարժությունները որպես երեխայի ռիթմի զգացողությանմիջոց 4
Գլուխ 2 Երաժշտառիթմիկ գործունեության տեսակները.....8
Եզրակացություն.....16
Գրականության ցանկ.....17
Հավելվածներ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունը կարևոր նշանակություն ունի երեխաների գեղագիտական և հոգեկան դաստիարակության գործում: Այն նպաստում է երեխաների հուզական ոլորտի, ազնիվ, վեհ զգացմունքների ձևավորմանը: Երաժշտության ընկալումը զարգացնում է ճանաչողական հետաքրքրությունը, գեղագիտական ճաշակը, ընդարձակում երեխայի մտահորիզոնը, ստեղծագործական երևակայությունը:

Չափառիթմի զգացողության զարգացումը երեխաների երաժշտական դաստիարակության կարևորագույն խնդիրներից մեկն է: Երաժշտական ռիթմի զգացումը մի ընդունակություն է, որի միջոցով ընկալվում ու վերարտադրվում է երաժշտական հնչյունների տևողությունների հաջորդականության շարժումը՝ ժամանակի ընթացքում:

Շարժվելով երաժշտական ռիթմին համապատասխան՝ երեխան զգում է նաև հնչյունների բարձրությունների փոխհարաբերությունը, որը և նրա մեջ ստեղծում է երաժշտական կերպար: Ռիթմի զգացողությունը զարգանում է երաժշտական գեղարվեստական ստեղծագործության միջոցով: Կենդանի երաժշտությունից կտրված ռիթմի վարժությունները չեն կարող ազդել երեխայի հուզաշխարհի վրա, ուստի և չեն կարող որևէ ունակություն զարգացնել. մասնավորապես՝ ռիթմի զգացողությունը: Եվ եթե հաշվի առնենք, որ երեխաների համար շարժումը բնական պահանջ է, ապա պարզ է դառնում, որ երաժշտական դաստիարակությունը նպատակահարմար է սկսել ռիթմի զգացողության զարգացումից:

Երաժշտառիթմական շարժումները իրենցից ներկայացնում են երաժշտության և շարժումների սերտ համագործակցություն, որտեղ առաջնայինը, թելադրողը երաժշտությունն է:

Համապատասխան երաժշտության ներքո երեխաները պարում են, խաղում, արտահայտում տարբեր կերպարներ, որոնք օգնում են ճիշտ ընկալել երաժշտական ստեղծագործության բնույթը, բովանդակությունը, կերպարը, արտահայտչական միջոցները, ձևը, արագությունը, ուժգնությունը: Զարգանում է նաև երեխայի երաժշտական զգայունակությունը, լսողությունը, հիշողությունը և հատկապես ռիթմի զգացողությունը:

ԳԼՈՒԽ 1. ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՌԻԹՄԻ ԶԳԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

<<Երեխային հնարավորություն տվեք շարժվելու, և նա ձեզ նորից կնվիրի 10 րոպե կենդանի ուշադրություն: Իսկ 10 րոպե կենդանի ուշադրությունը, եթե դուք կարողանաք այն նպատակայնորեն օգտագործել, ավելի արդյունավետ կլինի, քան մեկշաբաթյա կիսաքուն պարապմունքները>> [8]:

20-րդ դարի սկզբներին մի շարք երկրներում լայն տարածում գտավ ռիթմիկ դաստիարակության սիստեմը, որի հիմնադիրը հանդիսացավ շվեյցարացի երաժիշտ-մանկավարժ Է. Ժակ-Դալկրոզը: Նրա ստեղծած մեթոդը կայանում է հետևյալում. հատուկ վարժությունների միջոցով զարգացնել երեխաների երաժշտական լսողությունը, ռիթմի զգացողությունը, ուշադրությունը, ճկուն, արտահայտիչ շարժումները: Այդ դրույթները ուշադրության արժանացան նաև խորհրդային մանկավարժների կողմից՝ հետագայում զարգանալով ֆիզիոլոգիայի, հոգեբանության և երաժշտագիտական տվյալների վրա:

Երաժշտության դրական ազդեցությունը օրգանիզմի ընդհանուր ֆունկցիոնալ գործունեության վրա ապացուցված է: Այդ մասին գրել է Ի. Մ. Սեչենովը, բնութագրելով լսողական և մկանային զգացողությունների փոխադարձ կապը: [9]

Երաժշտական ունակությունների զարգացումը իրականացվում է լսողության կատարելագործման և երաժշտության հետ շարժումները համաձայնեցնել կարողանալու պրոցեսում:

Անհրաժեշտ է հնարավորին չափ վաղ սկսել նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների զարգացումը: Վաղ սկսելու հետ մեկտեղ պետք է կատարվի հետաքրքիր և մատչելի ձևով, դրանք կարող են լինել ռիթմական վարժություններ, երաժշտական խաղեր, պարեր, պարերգեր:

Խորհրդային հոգեբանությունը գտնում էր, որ երաժշտության ներգործությունը երեխաների ընդհանուր ֆունկցիոնալ գորլունեության վրա առաջացնում է շարժողական ռեակցիաներ: Հոգեբան Բ. Մ. Տեպլովի կարծիքով երաժշտության ընկալումը անմիջականորեն ուղեկցվում է այս կամ այն շարժողական ռեակցիաներով, շատ թե քիչ ճիշտ հաղորդելով երաժշտության շարժման ժամանակային ընթացքը: Համապատասխան երաժշտության ընտրության միջոցով

կարելի է առաջացնել որոշակի շարժողական ռեակցիաներ, կազմակերպել և ազդել նրանց որակի վրա։

Երաժշտառիթմիկ դաստիարակության համակարգի մշակման հարցով զբաղվել են Ն. Ա. Վետլուգինան, Ա. Վ. Կենեմանը, Ն. Ա. Մետլովը, Ս. Դ. Ռուդնևան և եւրիշները։

Մանկապարտեզում երեխաների երաժշտական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է պարապմունքների ժամանակ, որի մեջ ընդգրկվում են երաժշտական հետևյալ ձևերը. Երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժումներ (երաժշտական խաղեր, պարեր, երաժշտական վարժություններ), նվագ մանկական նվագարաններով , հանպատրաստիցստեղծագործել։

Ուսումնսիրելով կյանքի օրենքները, տեսնելով բնության մեջ շարժման ռիթմը՝ բժիշկները, երաժիշտները, մանկավարժները եկան այն եզրակացության, որ երեխաների առողջապահական և դաստիարակչական խնդիրները լուծելու համար շատ կարևոր է երաժշտության և շարժման համատեղ կիրառումը։ Շարժման միջոցով բացահայտվում են երաժշտական ստեղծագործության բովանդակությունը, կառուցվածքը, բնույթը, տեմպը, ուժգնությունը։ Միաժամանակ շարժումը նպաստում է երաժշտական ստեղծագործության գիտակցական ընկալմանը։ Երաժշտառիթմիկ շարժման ժամանակակից համակարգը ստեղծել է շվեյցարացի մանկավարժ և երաժիշտ Էմիլ Ժակ-Դալկրոզը՝ հաշվի առնելով երեխայի շարժվելու բնական պահանջը՝ կապված աճի հետ։ Հայտնի է, որ շարժման միջոցով երեխան ճանաչում է աշխարհը՝ կատարելով տարբեր խաղային, պարային շարժումներ՝ նա խորացնում է իր պատկերացումները շրջակա աշխարհի վերաբերյալ։ Երաժշտությունը երեխաների մեջ առաջացնում է շարժվելու ցանկություն։ Երաժշտության դաստիարակի խնդիրն այն է, որ կարողանա զարգացնել երեխայի՝ երաժշտության համապատասխան շարժումն արագ կատարելու կարողությունը, և հարկ եղած դեպքում նաև դադարեցնի այն , այսինքն՝ պետք է զարգացնել երաժշտության բնույթին համապատասխան երեխայի շարժողական ռեակցիան։ Նման պարապմունքների ընթացքում նկատվում է, որ պասիվ երեխաներն ակտիվանում են, իսկ ակտիվները՝ դառնում ավելի կարգապահ։ Երաժշտառիթմիկ շարժման ընթացքում ամրանում է նաև երեխայի օրգանիզմը։ Զարգանում են

երաժշտական լսողությունը, հիշողությունը, ուշադրությունը, ճարպկությունը, շարժումների ճշգրտությունը, արագությունը, մշակվում են շարժման այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ փափկությունը, ճկունությունը, ինչը նպաստում է իրանի ճիշտ զարգացմանը։

Երաժշտառիթմիկ շարժման հիմքում ընկած են երաժշտական կերպարների ընկալումը և դրանք շարժման միջոցով պատկերելու, ներկայացնելու կարողությունը։ Շարժվելով երաժշտությանը համապատասխան, երեխան ընկալում է դրա տարբեր արտահայտչամիջոցները, ներկայացնում մեղեդու բնույթն ու տեմպը, արձագանքում ուժգնության փոփոխություններին։ Սկսում և ավարտում է շարժումները երաժշտական ֆրազներին համապատասխան, վերարտադրում է պարզ ռիթմական պատկերներ և այլն։ Երեխան ընկալելով երաժշտության ռիթմի արտահայտչականությունը՝ կարողանում է ընկալել ամբողջ ստեղծագործությունը։

Երաժշտառիթմիկ շարժումը հարստացնում է երեխաների հուզական աշխարհը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, դաստիարակում ակտիվություն, կարգապահություն, կոլեկտիվի զգացողություն, նպաստում է օրգանիզմի ֆիզիկական կատարելագործմանը։ Երաժշտառիթմիկ շարժման ընթացքում ավելի կարևորվում է երաժշտության արտահայտչամիջոցներից տեմպը, մետրոռիթմը և դինամիկան։ Երաժշտության տեմպից կախված երեխան շարժվում է արագ կամ դանդաղ՝ արագացնելով կամ դանդաղեցնելով շարժումը։ Մետրոռիթմը (երաժշտության ուժեղ և թույլ մասերն են տարբեր տևողությունների հարաբերությամբ) համակարգում (կորդինացնում) է երեխայի շարժումները երաժշտության հետ։ Արդեն կրտսեր խմբիցդաստիարակի համակարգված աշխատանքի արդյունքում երեխաները կարողանում են ուժեղ և թույլ մասերի զգացողության շնորհիվ, տարբերել երկմասանի կառուցվածքը և փոփոխել շարժումները։

Դեռ վաղ մանկական տարիքից երեխան սիրում է վազել, թռչկոտել, պարային շարժումբեր անել. սա դեռ խաղային, պարային գործունեություն չէ, որովհետև երեխան շարժվում է ոչ ճիշտ, ոչ էլ արտահայտիչ։

Կրտսեր առաջին խմբում արդեն զարգանում է երաժշտության նյատմամբ երեխաների հուզական արձագանքը, զարգանում է երաժշտությունն ունկնդրելու,

հիշելու և դաստիարակի օգնությամբ կամ երգի բովանդակությանը համապատասխան շարժումներ կատարելու կարողությունը։

Կրտսեր երկրորդ խմբում կարողանում են յուրացնել և կատարել շարժումբերն ինքնուրույն, բայց այդ շարժումները դեռ լրիվ համակարգված (կորդինացված) չեն երաժշտության հետ. Երեխաները դժվարությամբ են կողմնորոշվում տարածության մեջ, դժվարանում են կոլեկտիվ գործունեության մեջ, այդ պատճառով նրանց երաժշտառիթմիկ շարժումները բավականին համեստ են : Երեխաները սովորում են շարժվել խիստ հակասական բնույթի երաժշտության ներքո, արագ և դանդաղ տեմպերով, արձագանքել երաժշտության սկզբին, ավարտին և կատարել պարզ շարժումներ։

Երաժշտառիթմիկ շարժման գործընթացում զարգանում են երեխաների երաժշտական որոշակի ընդունակություններ. մասնավորապես՝ երաժշտության ընկալումը, երաժշտառիթմական զգացողությունը, ռիթմիկ շարժումներ կատարելու, տարածության և ժամանակի մեջ ճիշտ կողմնորոշվելու կարողություններ ու գեղարվեստաստեղծագործական ունակությունները։

4-5 տարեկանների մոտ շարունակվում է ֆիզիկական զարգացումը, փոխվում է արտաքինը, հասակը, մարմինը դառնում է ավելի ձիգ, սլացիկ, և այդ պատճառով էլ առաջանում են երաժշտառիթմական շարժման նոր հնարավորություններ։

5-6 տարեկան երեխաների մոտ դեռ շարունակվում է ֆիզիկական, հոգեկան, ինչպես նաև երաժշտական զարգացումը, նրանց մոտ ձևավորվում է կեցվածքը, շարժումները դառնում են ավելի ազատ ու արտահայտիչ, սյուժետային խաղերի և պարերի ընթացքում դառնում են ավելի կազմակերպված, միասնական և վստահ։ Երեխաները կարող են և ուզում են տիրապետել խաղային կարողություններին և պարային շարժումներին, որը պահանջում է ռիթմի զգացողություն և ճիշտ կողմնորոշում։ Նրանք կարողանում են ազատ կողմնորոշվել տարածության մեջ և բավականին հեշտությամբ կատարել հիմնական շարժումները։ Երեխաների մեծ մասը հեշտությամբ ընդգրկվում է ստեղծագործական խաղերի, ազատ պարերի մեջ, սիրում է հորինել պարեր՝ հիմնականում կիրառելով իրենց սովորած պարային շարժումները։ Չնայած դրան, նրանց հնարավորությունները դեռ սահմանափակ են, շարժումների մեջ դեռ չկա պահանջվող ճկունությունը, արտահայտչականությունը։ Այսպիսով 5-6 տարեկանում երեխաներն ունեն երաժշտառիթմական շարժմանը

տիրապետելու հիանալի հնարավորություններ, բայց և ֆիզիկական ծանրաբեռնվածության (խաղեր, պարեր) ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի առողջական խնդիրները:

Երաժշտառիթմիկ շարժման հիմնական տեսակներն են՝

●քայլք, թեթև վազք, ցատկեր

● մարմնամարզական շարժումներ համապատասխան պարագաներով, գնդակներ, ժապավեններ, դրոշակներ,

●պարային պարզ քայլեր և տարրեր

●նմանողական շարժումներ՝ կենդանիների, թռչունների, մարդկանց տարբեր շարժումների նմանակում:

Այս բոլոր շարժումները նպաստում են երեխաների պատկերացումների ստեղծագործական ակտիվության զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԽԱՂ

1.Սյուժետային
2.Ոչ սյուժետային

ՊԱՐ

1.Ճկուն կամ հաստատված շարժումներով պարեր
2. Ազատ ստեղծագործական պարեր
3. Նմանողական պարեր
4. Համակցված պարեր
5. Մանկական պարահանդեսային պարեր
6. Կերպարային պարեր

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1.Վարժություններ
2.Նախապատրաստական վարժություններ
3.Կերպարային վարժություններ

<<Խաղը նրա՝ մանուկ մարդու բնական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը>>։ (Հովհաննես Թումանյան)

Նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական լսողությունը զարգացնելու, երաժշտություն լսելու ունակություն մշակելու համար կիրառվում են տարբեր ու բազմազան միջոցներ։ Դրանցից մեկն էլ երաժշտական խաղերն են։

Երաժշտական խաղերը երեխաների երաժշտական ունակությունների զարգացմանը մեծ հնարավորություններ են ընձեռում։ Երեխան կարողանում է ընկալել, զգալ և իմաստավորել երաժշտությունը՝ կապված խաղի բովանդակության հետ, հուզականորեն արձագանքել դրան։ Երաժշտությամբ ուղեկցվող խաղային տարբեր գործողությունները ավելի հեշտացնում են երաժշտության ընկալումը։ Դրա շնորհիվ երեխան լավ է զգում երաժշտական ստեղծագործության բնույթը, բովանդակությունն ու կառուցվածքը, կարողանում է տարբերել երաժշտական ստեղծագործության առանձին մասերը և իր շարժումները համաձայնեցնել ու ներդաշնակել նրա սկզբի և ավարտի հետ։ Դա երեխաներից պահանջում է լսողական ուշադրության կենտրոնացում։

Տարբեր խաղեր կատարվում են տարբեր բնույթի երաժշտական ստեղծագործությունների ուղեկցությամբ։ Դա երեխաներին հնարավորություն է տալիս ծանոթանալու տարբեր ժանրերի ու բնույթի երաժշտական ստեղծագործությունների հետ։

Երաժշտական խաղերը զարգացնում են երեխաների հուզաշխարհը և որոշակի դեր խաղում նրանց բնավորության ձևավորման գործում։ Դրանք նպաստում են երեխաների մեջ զսպվածություն, վճռականություն, պատասխանատվություն դաստիարակելուն։

Մեծ է երաժշտական խաղերի դերը նաև երեխաների ֆիզիկական դաստիարակության գործում։ Երաժշտությունը ներգործում է ոչ միայն զգայական աշխարհի ձևավորման, այլև շարժումների որակի վրա, դրանք դարձնում գեղեցիկ, ներդաշնակ, ռիթմիկ և արտահայտիչ։ Երաժշտական խաղերն իրենց մատչելիության, բովանդակության պարզության և երաժշտության հետ ներդաշնակ զուգակցման շնորհիվ գրավում ու հրապուրում են երեխաներին, նրանց մեջ առաջացնում առույգ ու կենսախինդ տրամադրություն։

Դիտարկենք մեկ սյուժետադերային խաղ։ Օրինակ՝

Թեմա՝ <<Պալատիկ>> ռուսական ժողովրդական հեքիաթ

Խնդիրները Սյուժետադերային խաղի միջոցով զարգացնել երեխաների դերասանական կարողությունները, երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ կատարելու

հմտությունները։ Զարգացնել երեխաների ռիթմական կարողությունները, դերասանական հմտությունները։

Պարապմունքի ընթացքը

Սկզբնական փուլում ընտրում ենք կենդանիների դերակատարները։ Պատմում ենք հեքիաթը, իսկ կենդանիները հաջորդաբար մուտք են գործում՝ համապատասխան շարժումներով և խոսքով։

Նախօրոք ընտրեցինք <<մկնիկ>>, <<գորտ>>, <<նապաստակ>>, <<աղվես>> և <<արջ>> և այլն։ Մնացած երեխաները ձեռք_ ձեռքի տված կազմում են շրջան՝ <<պալատիկ>>, որից դուրս գտնվում են նշված կենդանիները>>։

Երեխաները կատարում են <<Պալատիկ>> երգը և քայլում շրջանի ուղղությամբ դեպի աջ։

<<Դաշտի միջին մկնիկը վազում է>> բառերին <<մկնիկը>> մոտենում է շրջանին (<<պալատիկին>>) և ծափ տալիս (<<բախում դուռը>>)։ Երեխաները կանգնում են, իսկ <<մկնիկը>> շարունակում է երգը՝

…<<Ո՞վ է, ո՞վ է այս տնակում ապրում,

Ո՞վ է, ո՞վ է այս պալատում ապրում>>։

Չլսելով պատասխանը, <<մկնիկը>> վազում է շրջանի մեջ՝ <<պալատիկը>>։

Երեխաները նորից երգում են և քայլում շրջանի ուղղությամբ, իսկ <<գորտը>> ցատկոտում է դեպի շրջանը։

…<<Դաշտի միջին <<գորտը>> ցատկոտում է,

Մոտենում է դռանը, պինդ թակում է>>, բառերին

<<գորտը>> մոտենում է շրջանին և ծափ տալիս։ Երեխաները կանգ են առնում և լսում, իսկ <<գորտը>> երգը շարունակում է՝

…<<Ո՞վ է, ո՞վ է այս տնակում ապրում,

Ո՞վ է, ո՞վ է այս պալատում ապրում>>։

<<Մկնիկը>> պատասխանում է (առանց երգի)՝

_ Ես ճստիկ մկնիկն եմ, իսկ դուռ՞վ ես։

_ Ես կռկռան գորտն եմ…

_ Արի ապրենք միասին,_ հրավիրում է <<մուկը>>, և <<գորտը>> շրջանի մեջ է մտնում։

Նույն ձևով շրջանի մեջ են մտնում նաև <<նապաստակն >> ու <<աղվեսը>>։

Ապա շրջանին մոտենում է արջը և սպառնում՝ <<Իսկ ես բոլորիդ բռնողն եմ>>: Կենդանիները դուրս են փախչում <<պալատից>>, իսկ <<արջը>> աշխատում է նրանց բռնել:

Երբ <<արջը>> բռնում է պայմանավորված քանակի <<կենդանիների>> ընտրում են նորերը, և խաղը կրկնվում է:

Երաժշտական խաղ ուսուցանելիս ամենակարևոր պայմանը երաժշտության և շարժումների միասնական ընկալումն է երեխաների կողմից:

Խաղը բացատրելիս նախ կատարվում է երաժշտությունը, բացահայտվում նրա կառուցվածքը (քանի մասից է), բնույթը, ռիթմը, տեմպը, կրկնվող մասերը: Ավագ խմբերում ՝ նաև երաժշտական նախադասությունները և ֆրազները: Դրանցից հետո տրվում է համառոտ նկարագրությունը և նորից կատարվում երաժշտությունը: Այս մեթոդով կարող ենք սովորեցնել հետևյալ խաղերից մեկը.

<<Խաղ դափերով>> Պոլկա (երաժշտություն՝ Մ. Կրասև)

Խնդիրները՝ Մշակել դափերին ռիթմիկ հարվածելու կարողությունը: Կատարելագործել դափին ռիթմիկ հարվածելու հմտությունը: Զարգացնել երեխաների ռիթմական զգացողությունը և ստեղծագործական ինքնուրույնությունը խաղերի միջոցով:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները կազմում են շրջան: Երեք երեխա դափը ձեռքերին կանգնում են շրջանի կենտրոնում:

Կատարվում է <<Պոլկա>>_ն:

1_8_րդ տակտ._ Կենտրոնի երեք երեխաները դափ են խփում, իսկ մյուսները պարում են տեղում, ով ինչպես ցանկանում է, համաձայնեցնելով իրենց շարժումները երաժշտության բնույթին:

9_16_րդ տակտ._ Շրջան կազմողները պպզում են և փակում աչքերը, իսկ դափով երեխաները կամացուկ դուրս են գալիս շրջանից, անցնում պպզած երեխաների թիկունքը, զգուշությամբ դափը դնում երեխաներից երեք հոգուետևում և վերադառնում շրջանի կենտրոնը:

Վերջին ակորդին պպզած երեխաները բացում են աչքերը և ձեռքերը ետ տանելով շոշափում, թե իրենց մո՞տ է արդյոք դափը:

Այն երեխաները, որոնց մոտ գտնվում է դափը, վերցնում են այն և կանգնում շրջանի կենտրոնում, իսկ նախորդ երեքը գրավում են նրանց տեղերը:

Երաժշտության առաջին ութ տակտը կրկնվում է (մինչև <<վերջ>> բառը):

1_8_րդ տակտ._ Դափ ստացող երեխաները պարում են, իսկ մյուսները՝ ծափ տալիս:

Խաղը վերսկսվում է:

Խաղը միաժամանակ երեխաների մեջ զարգացնում է ճարպկություն , շուտ կողմնորոշվելու ունակություն:

Թեմա՝ <<Աչքակապուկ փայտով>> երաժշտությունը Լեհական ժողովրդական երգ

Խնդիրները՝ Զարգացնել երեխաների երաժշտական լսողությունն ու ռիթմը, մշակել շարժումները, շրջանի համաչափությունը, ռիթմիկ ծափերը: Կատարելագործել երեխաների ռիթմական զգացողությունը՝ փայտով ռիթմիկ պատկերը ցույց տալու միջոցով:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները իրար ձեռքեր բռնած շրջան են կազմում, որի կենտրոնում կանգնած է մեկ երեխա դիմակով և փայտը ձեռքին. դիմակը ծածկում է նրա աչքերը:

Երաժշտության առաջին մաս_Երեխաները վազում են շրջանագծի ուղղությամբ դեպի աջ:

Երաժշտության երկրորդ մաս_Դիմակը հագած երեխան փայտով խփում է հատակին երաժշտության ռիթմին համաձայն:

Երաժշտության երրորդ մաս.

1_ին տակտ._ Շրջան կազմող երեխաները երկու անգամ ծափ են տալիս և անմիջապես ձեռքերը թաքցնում մեջքին:

2_րդ տակտ._Ասում են <<դարձիր>>, և դիմակով երեխան շրջվում է:

3_4_րդ տակտ._Կրկնվում է նույնը:

5_7_րդ տակտ._Կրկնվում են 1_3_րդ տակտերի շարժումները:

8_րդ տակտ._Երեխաները ասում են՝ <<Ցույց տուր>>, և դիմակով երեխան ձեռքի փայտը պարզում է առաջ: Նա, ում որ ցույց է տալիս, բռնելով փայտի ծայրը, պետք է ասի՝ <<Ո՞վ եմ ես>>:

Եթե դիմակ հագած երեխան ճանաչի փայտ բռնող երեխայի ձայնը, ապա դիմակը ստանում է ճանաչված երեխան, իսկ եթե չճանաչի, խաղը կրկնում է նույն դիմակով երեխան:

<<Երգեցողությունն ու պարը կառույգացնեն , կմարզեն մարմինը: Բոլոր գեղարվեստները շարժումի մեջ կարտահայտվեն: Ուրեմն մանկական երգեցողությունը, պարը ինչքան կարևորություն ունի ապագա քաղաքականության մեջ>> ... Կոմիտաս

[5, էջ 63]

Պարերը, մեծ հաճույք պատճառելով երեխաներին, միաժամանակ նպաստում են երաժշտական ընդունակությունների զարգացմանը: Պարի միջոցով երեխան կարողանում է զգալ երաժշտության բնույթը, բովանդակությունը, կառուցվածքը,

համաչափությունը, ռիթմը: Սովորում է ավելի լավ կողմնորոշվել ժամանակի և տարածության մեջ, զարգանում է նրա հիշողությունը, ուշադրությունը:

Թեմա՝ <<Պար ծափերով>> երաժշտություն և նկարագրություն Է. Խազիզյան

Խնդիրները՝ Զարգացնել երեխաների երաժշտական ռիթմը՝ պարերի կատարման միջոցով, մշակել պարային տարրերի հստակ կատարման հմտությունը:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները զույգեր կազմելով կանգնում են շրջանաձև, մեկը մյուսի դեմ (մեկը՝ մեջքով, մյուսը՝ դեմքով դեպի շրջանի կենտրոնը) և բռնում իրար ձեռքերը:

1_ին տակտ._ երեխաները թեթև պպզում են և արագ ուղղվում:

2_րդ տակտ._Մեկ ծափ են կատարում կրծքի առաջ:

3_4_րդ տակտ._ Կատարում են 1_2_րդ տակտերի շարժումները:

5_րդ տակտ._ Զույգերը իրենց ձախ ափերը իրար են զարկում և պահում այդ դրությամբ մինչև 8_րդ տակտի կեսը:

6_րդ տակտ._ Աջ ձեռքը վեր_կողմ են բարձրացնում, դաստակը մեկ անգամ դեպի ներս պտտեցնում, միաժամանակ աջ ոտքը մի փոքր կողմ_ետ տանում և թաթի ծայրը շեշտակի դնում հատակին:

7_8_րդ տակտ._ Զույգ կազմող երեխաները պահպանելով 6_րդ տակտի ձեռքերի դրությունը, պարելով դոփում են իրենց տեղերը:

5_8_րդ տակտերի շարժումները կրկնվում են, վերջում յուրաքանչյուր երեխա վերադառնում է իր նախկին տեղը:

Երաժշտությունը կրկնվում է:

1_ին տակտ._ Զույգ կազմող երեխաները երկու ձեռքով իրար ափերի են զարկում:

2_րդ տակտ._ Կրծքի առաջ մեկ ծափ են կատարում:

3_4_րդ տակտ._ Կրկնում են 1_2_րդ տակտերի շարժումները:

5_8_րդ տակտի շարժումները նույնն են և, ինչպես առաջին անգամ, կրկնվում են:

Երաժշտությունը նորից կրկնվում է:

1_2_րդ տակտ._ Երեխաները ձեռքերը պարզում են դեպի աջ և երեք անգամ դաստակները դեպի ներս պտտեցնում:

3_4_րդ տակտ._ Կատարում են 1_2_րդ տակտերի շարժումները, միայն դեպի ձախ կողմ:

5_8_րդ տակտերի շարժումները, իրենց կրկնությամբ, նույնն են:

Երաժշտառիթմիկ շարժման մյուս տեսակը **վարժությունն է՝** ուսուցման նպատակով միևնույն շարժման բազմակի կրկնությունը: Վարժությունների նշանակությունները տարբեր են՝

_վարժություններ, որոնք նպատակ ունեն կատարելագործելու հիմնական շարժումները՝ քայլք, վազք, ցատկեր,

_նախապատրաստական վարժություններ, որոնք նպատակ ունեն նախապատրաստելու նոր պարի կամ խաղի ուսուցմանը՝ շրջանաձև քայլք, պտույտներ, փափուկ կքանիստ, գնդակի փոխանցումներ,

_կերպարային վարժություններ, որոնք նպատակ ունեն ավելի լավ ներկայացնելու խաղային կերպարները՝ արջի քայլք, նապաստակի թռչկոտելը, ձիու վազքը, որոնք հետագայում կօգնեն անհատական դերերի կատարման ժամանակ:

Երաժշտական խաղերը, պարերը և վարժություններն ունեն ընդհանուր մեկ նպատակ՝ զարգացնել երեխաների երաժշտության ընկալումը և ռիթմական շարժումը:

Թեմա՝ <<Փուչիկ>> եղանակ Մ. Միրզայանի

Խնդիրները՝ Կարողանալ կազմել շրջան, փափուկ կքանստել:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները դաստիարակի հետ միասին ձեռք ձեռքի տված կազմում են սեղմ շրջան: Դաստիարակը կատարում է <<Փուչիկ>> երգը: Երբ նա երգում է, որ փուչիկը փքվում է, երեխաները աստիճանաբար մեծացնում են շրջանը, յուրաքանչյուր տակտին անելով երկու քայլ դեպի հետ:

Երգի վերջին հնչյունի հետ միաժամանակ երեխաները միաբերան բացականչում են <<բու՛մ>>, բաց թողնում ձեռքերը և անմիջապես պպզում, մեղմորեն արտասանելով <<սը՛ս>>:

Խաղը կրկնվում է մի քանի անգամ և միշտ սկսվում է սեղմ շրջանով:

Սկզբում խաղը անց է կացվում առանց նվագակցության՝ դաստիարակի երգի տակ, իսկ ազդանշանը կարող է լինել խոսք,ծափ և այլն:

Երեխաների ռիթմիկ զարգացման կարևոր մաս են կազմում նաև նվագ **մանկական նվագարաններով:** Երեխաների գեղագիտական դաստիարակության խնդիրների իրականացման գործում երաժշտական նվագարաններին և մանկական խաղալիքներին հատուկ դեր է հատկացվում: Դրանք մեծ հետաքրքրություն են առաջացնում, ուստի լայնորեն կիրառվում են ընտանիքում, մանկապարտեզում, ընդգրկում են երաժշտության ոլորտը, օգնում երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:

Մանկապարտեզում պետք է ունենալ մանկական այնպիսի նվագարաններ, որից կարելի լինի երաժշտական համույթ կամ նույնիսկ փոքրիկ նվագախումբ կազմել:

Միջին, ավագ և նախապատրաստական խմբերում երեխաները ծանոթանում են մի շարք նվագարանների հետ ու աստիճանաբար դրանց վրա նվագելու հմտություն ու փորձ են ձեռք բերում:

Մանկական նվագարանների համար ընտրված երաժշտական երգացանկը պետք է լինի մատչելի և գեղարվեստական բարձր մակարդակով:

Այն կազմված պետք է լինի դասական, ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններից, ինչպես նաև ժողովրդական մեղեդիներից, որոնք բազմաժանր են և հարուստ:

Նվագելու համար ստեղծագործությունները ընտրելիս հարկավոր է միշտ հաշվի առնել երեխաների կատարողական հնարավորությունները:

Թեմա՝ Շվեյցարական ժողովրդական երգ>> նվագարաններով կատարում

Խնդիրները՝ Երեխաներին հաղորդակից դարձնել տվյալ տարիքին համապատասխան մանկական նվագարաններով նվագելու կուլտուրային՝ զարգացնել մանկական նվագարաններով կատարվող ժողովրդական, դասական, ժամանակակից երաժշտության երաժշտագեղագիտական ընկալումը՝ ընդլայնելով երաժշտական տպավորությունների շրջանակը: Սովորեցնել տարբերել, համեմատել, ընդհանրացնել երկմասանի ստեղծագործության բնույթը:

Պարապմունքի ընթացքը

Մանկական նվագարաններ՝ դափ, մարակաս, զանգուլակ, մետաղաֆոն:

Մեթոդական ուղղորդումներ՝ ստեղծագործության առաջին և երկրորդ մասերում ռիթմական պատկերը կոնտրաստային է: Այդ պատճառով մետաղաֆոնի կատարմամբ գլուսանդոները պետք է հստակ հնչեն տակտի ուժեղ մասում, որպեսզի դրանց հաջորդող ութերորդականները զանգուլակների, մարակասների, դաի ևեռանկյունու կատարմամբ

հակադրվեն:

Երաժշտական դաստիարակության մեթոդներն ու հնարները կարելի է սահմանել որպես մանկավարժի փոխկապակցված գործունեության ամբողջություն, որն ուղղված է երեխաների երաժշտական ընդունակությունների զարգացմանը և երաժշտական մշակույթի ձևավորմանը: Մեթոդների ու հնարների ընտրությունը կախված է երաժշտական դաստիարակության խնդիրներից ու բովանդակությունից:

Ներկայացված պարապմունքներին, յուրաքանչյուր երաժշտական գործունեության (ունկնդրում, երգ, երաժշտառիթմիկ շարժում, նվագ մանկական նվագարաններով) դեպքում հարկավոր է պարզել.

_Համապատասխանու՞մ է բովանդակությունը երեխայի երաժշտական և ընդհանուր զարգացման մակարդակին, ունակություններին (արդյո՞ք շատ բարդ կամ շատ հեշտ չեն, ոչ լիարժե՞ք են հագեցված կզմ բա՞րդ են): Համապատասխանու՞մ է նյութը <<Դաստիարակության ծրագրին>> և առաջադրված խնդիրներին:

_Որքանո՞վ է պահպանված կապը նախորդ պարապմունքի հետ, ո՞րն է նորը, կատարելագործվածը, ինչպիսի՞ն է դրանց հաջորդականությունը, պահպանվա՞ծ է աստիճանական բարդացման սկզբունքը, ճի՞շտ է կառուցված պարապմունքն ամբողջապես:

Այս ամենի հետ մեկտեղ շատ կարևոր է համագործակցությունը ծնողների, ընտանիքի հետ: Նախադպրոցական հիմնարկի մանկավարժը պետք է կարողանա համոզել և բացատրել ծնողներին, որ միայն հետաքրքրությունը կսրող է երեխային օգնել ձեռք բերել երաժշտական զարգացում: Հարկավոր է ստեղծել խաղային իրավիճակներ և հետևել, որ երեխաները չհոգնեն: Անհրաժեշտ է հիշել, որ երեխան չի կարող երկար ժամանակ զբաղվել միևնույն գործով: Հարկավոր է երաժշտալան գործունեության փոփոխում (երգ, խաղ, նվագ) և դրանց կազմակերպում՝ հետաքրքիր ձևերով:

Այսպիսով մեծ է ծնողների դերը երեխայի լիարժեք ձևավորման գործում, և, անշուշտ, երաժշտական դաստիարակության ճիշտ կազմակերպումն ընտանիքում բազմակողմանի զարգացման և հոգևոր արժեքներ ունեցող մարդու կարևորագույն միջոցներից մեկն է: Ծնողները պետք է ստեղծեն բարենպաստ պայմաններ, որպեսզի աճող սերունդը կարողանա լիարժեք բացահայտել բնությունիցտրված իր ներքին հնարավորությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով. երաժշտառիթմիկ շարժումը մի միջոց է, որով զարգանում են երաժշտության նկատմամբ երեխայի հուզական արձագանքը և ռիթմի զգացողությունը: Տեսնելով խաղային, պարային շարժումների, պարերգերի գեղեցկությունը, նրբագեղությունը, ձգտելով կատարել դրանք երաժշտությանը համապատասխան, երեխան սովորում է տեսնել և գնահատել գեղեցիկը, և այդ կերպ զարգանում է նրա գեղագիտական ճաշակը:

Այսպիսով՝ երաժշտական դաստիարակության մեթոդների ընտրության ժամանակ մենք գնում ենք կենդանի դիտումից դեպի վերացական մտածողություն և դրա միջոցով՝ դեպի գործնական աշխատանք: Խոսքը և երաժշտությունը երեխայի գործունեությանը տալիս են որոշակի ուղղվածություն՝ օգնելով նրան հասկանալ ու կատարել առաջադրանքները:

Ուսումնսիրելով կյանքի օրենքները, տեսնելով բնության մեջ շարժման ռիթմը՝ բժիշկները, երաժիշտները, մանկավարժները եկան այն եզրակացության, որ երեխաների առողջապահական և դաստիարակչական խնդիրները լուծելու համար շատ կարևոր է երաժշտության և շարժման համատեղ կիրառումը: Շարժման միջոցով բացահայտվում են երաժշտական ստեղծագործության բովանդակությունը, կառուցվածքը, բնույթը, տեմպը, ուժգնությունը: Միաժամանակ շարժումը նպաստում է երաժշտական ստեղծագործության գիտակցական ընկալմանը:

Երաժշտառիթմիկ շարժումը հարստացնում է երեխաների հուզական աշխարհը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, դաստիարակում ակտիվություն, կարգապահություն, կոլեկտիվի զգացողություն, նպաստում է օրգանիզմի ֆիզիկական կատարելագործմանը:

Երաժշտառիթմիկ շարժման գործընթացում զարգանում են երեխաների երաժշտական որոշակի ընդունակություններ. մասնավորապես՝ երաժշտության ընկալումը, երաժշտառիթմական զգացողությունը, ռիթմիկ շարժումներ կատարելու, տարածության և ժամանակի մեջ ճիշտ կողմնորոշվելու կարողություններ ու գեղարվեստաստեղծագործական ունակությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անահիտ Գևորգյան <<Ռիթմիկա>> մեթոդական ձեռնարկ Երևան Մեկնարկ 2022թ
2. Կ.Ղազարյան, Գ. Թադևոսյան, Լ. Սմբատյան <<Երաժշտություն պարապմունքներ>> Կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերի համար ուսումնամեթոդական ձեռնարկ (Երևան 2015թ)
3. Կ. Ղազարյան, Գ. Թադևոսյան <<Երաժշտական պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում>> ուսումնամեթոդական ձեռնարկ (Երևան 2016թ)
4. Կ. Ղազարյան, Գ. Թադևոսյան <<Երաժշտական պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի ավագ խմբում>> ուսումնամեթոդական ձեռնարկ (Երևան 2019թ)
5. Կոմիտաս <<Պարն ու մանուկը>> հոդված, էջ 63
6. Շ.Շ. Մկրտչյան <<Երաժշտությունը մանկապարտեզում>> (1991թ.)
7. Ս. Գալիկյան <<Նախադպրոցական երաժշտական խաղերի և պարերի ուղեցույց>>
8. Ушинский К. Д., Сочинения , т. III, Изд-во АПН, РСФСР, 1948, ст. 152
9. Сеченов И. М., Рефлексы головного мозга. Изобр. произв., М., 1953.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

<<Անկյունիկներ>> (դաստիարակ_ծնող մասնակցությամբ)

<<Պալատիկ>>

https://www.facebook.com/groups/257254225413591/permalink/522617962210548/?mibextid=UyTHkb

<<Խաղ_դափերով>>

https://www.facebook.com/groups/257254225413591/permalink/770099217462420/?mibextid=UyTHkb

<<Աչքակապուկ.փայտով>>

https://www.facebook.com/groups/257254225413591/permalink/529837851488559/?mibextid=UyTHkb

<<Փուչիկ>>

https://www.facebook.com/groups/257254225413591/permalink/770100480795627/?mibextid=UyTHkb

<<Շվեյցարական ժողովրդական երգ>>

https://www.facebook.com/groups/257254225413591/permalink/746158199856522/?mibextid=UyTHkb

<<Դոփ-դոփիկ>>

https://www.facebook.com/groups/257254225413591/permalink/1047791323026540/?mibextid=UyTHkb